

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾ ԽՈՐԱՆԻ

ԱՍԵՂՆԵԳՈՐԾ ՎԱՐԱԳՈՅՐԸ

Էջմիածնում պահուած ասեղնեգործ կարեւոր մնացորդներից առաջինն է աւագ խարանի մեծ վարագոյրը: Տարբաղդաբար ձեռքի տակ չունինք նորա լրիւ չափագրութիւնը: Լայնքը 5,65 մետր է, իսկ բարձրութիւնը մօտաւորապէս կարող ենք հաշուել 7 մետր: Ասեղնեգործութիւնը կատարուած է կարմիր տալասի դաշտի վերայ, ոսկի եւ արծաթի թելերով:

Պատկերագրութեան նիւթն է կաղմում Լուսաւորչի տեսիլը կամ քրիստոնէութեան հաստատութիւնը Հայոց մէջ: Կեդրոնում նկատւում են խարիսխների վերայ հաստատուած երեք խոյակաղարդ սիւներ կամարներով միացած իրար հետ, իսկ կամարների վերայ խաչաղարդ գմբէթ, գլխին մի աւելի մեծ ոսկեթել կամարով:

Այս բոլորով էջմիածնի տաճարն է պատկերացուած Ագաթանգեղոսի մէջ պահուած Լուսաւորչի տեսլեան համաձայն: Սիւների խարիսխները հաստատուած են բաց մոխրագոյն երկու տախտակի վերայ, շէնքը արծաթի թելերով, իսկ խաչի վերեւի կամարի հետ ոսկեթել:

Շէնքի կամ տաճարի աջ կողմից ծունկ է չոքել վեղարաւոր Լուսաւորիչը, լայնաթեւ վերարկուով, ներքնազգեստը բաց մանիշակագոյն թեղանի – քով, իսկ վերան ձգել է փիլոն, յետեւի կողմից լանջերին նկատւում է զոյգ արտախուրակների նման զարդեր, գուցէ եւ մազերը լինին: Ներքնազգեստ կապան սպիտակաւուն է, վերարկուն դորշ, իսկ փիլոնն աւելի մոյգ, արտախուրակները, գուցէ եւ մազերը, եւս առաւել մոյգ: Աջ ուսին յենած է գնդագլուխ գաւազանը երկու օղակով: Ձեռքերը աղօթողի դիրքով, մէկը վեր, միւսը վար: Դէմքն սպիտակաւուն, մօրուքը մոյգ, ոսկեփայլ, իսկ մազերը բաց կինեմոնագոյն: Ճակատը ճաղատ եւ լայն: Սրածայր եւ բոլորակ վեղարը յետ է ձգուած: Այս գոյների մէջ ոսկեթելի խառնուրդ կայ, որ յատուկ գոյն է տալիս:

Տաճարը ձեւացնող պատկերից վեր, արծաթաթել շրջանակի մէջ Յիսուսի անդրին է. ձախով մեծ, խաչաղարդ երկրագունդ բռնած, իսկ աջով ուռը, որ վեր է բարձրացել խփելու այն տեղին, ուր տաճարը պիտի չինուի: Նորա կապան կամ ներքնազգեստը գործը-

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

ւած է նուրբ ոսկեթելով, ուսերին ձգել է շուրջառանման վերնազգեստ, կրծքին ճարմանդուած. շուրջառի եզրները ժապաւէնով զարդարուած է, որի կապոյտ դաշտի վերայ բուսական զարդարանքներով բանուած: Կապոյտի տակից՝ օձիքի մօտ երեւում է սպիտակ օձիքաւոր շապիկը: Մազերն ու միրուքը մոյգ կիներմոնագոյն, երեսը արծաթաթել, լուսոյ պսակը (նիմպիուս) բոլորակ եւ ճաճանչաւոր:

Յիսուսի երկու կողմից մի մի զոյգ հրեշտակներ ծունկ չոքած, մեծակրծքներին խաչած՝ մեծարանքի արտայայտութեամբ (ատորասիոն). աւելի բարձր՝ բոլորակի մէջ՝ աղաւնակերպ Սուրբ Հոգին գլխի վայր ցած է սաւառնում, երկու կողմից մի մի զոյգ զոյգ հրեշտակներ ծունկ չոքած, մեծարանքի արտայայտութեամբ, ինչպէս Յիսուսի կողքերից էր:

Աւելի բարձր ամպերով երկինքն է ձեւացրած կիսաբոլորակ ձեւով. ամպերի միջից երեւում են վեցթեւեան սերովբէք, իսկ ամպերի վերայից թեւերը տարածած, օրհնում է Հայր Աստուած. երեւում է միայն անդրին, ուսերին ոսկեթել շքեղ շուրջառ ձգած, որ ճարմանդուած է կրծքին: Հայր Աստուծոյ միրուքը մեծ է. գլխի մազերը ուսերին փռուած. լուսոյ պսակը մեծ եւ ճառագայթաձեւ, որից աւելի մեծ ճաճանչներ են ուղղուած երկինքը ձեւացնող ամբողջ տարածութեան վերայ:

Բուն տեսլեան հետ են կապուած, աջից եւ ձախից վեց վեց առաքեալների անդրիները. որոնք էլ Տիրոջ փառքի մասն են կազմում, ինչպէս հրեշտակները: Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք հադուստների նկարագրութիւնն իրենց առանձնայատկութիւններով: Նրանց դասաւորութիւնն է աջ կողմից (աջ դաս) ներքեւից վեր՝ 1. «Առաքեալն Փիլիպպոս», 2. «Առաքեալն Թովմաս», 3. «Աւետարանիչն Յովհաննէս», 4. «Առաքեալն Ակորէ», 5. «Առաքեալն Անդրէաս», 6. «Առաքեալն Պետրոս»,:

Ձախ դասի կողմից ներքեւից դէպի վեր. 1. «Առաքեալն Սիմոն», 2. «Առաքեալն Թաթթէոս» (.'), 3. «Մաթէոս», 4. «Առաքեալն Բարդուղիմէոս», 5. «Տնեղբայրն Յակոբոս արդարն», 6. «Առաքեալն Պողոս»:

Տեսիլքի բացատրութիւնն ու թագաւորի քրիստոնէութիւն ընդունելու իրողութիւնը ցուցադրուած է իբրեւ հետեւանք եւ մաս ամբողջութեան: Ներքեւում լուսոյ խորանի (տաճարի) աջ կողմից, Լուսաւորիչ ձեւակերպուած երկրորդ անգամ չոքած, բայց այժմ հայրապետական զգեստաւորութեամբ: Շապիկն սպիտակ, արծաթաթել, ծոպաւոր. աջ կողքից կախել է խաչազարդ կոնքեռը: Վերան ձգել է առաջը բաց, յունական շուրջառը, եզրները կամ քղանցքները ոլորապտոյտ բուսական զարդարանքի ժապաւէնով, տերեւ եւ ծաղիկ մոխրագոյն եւ կապոյտ գոյներով: Շուրջառն էլ ամբողջապէս զարդարուած է բուսական մոտիւներով: Եմիփորոնը պատած է ուսերի վերայով, ինչպէս սովորական է այժմ. իշխող գոյնը կապոյտն է, ոսկեթել ծաղիկներով եւ փնջերով վերջացած: Յետեւից կախուած են արտախուրակները, փնջերով վերջացած: Վակասը բարձր: Թագը կեդրոնում խաչ ունի, մարգարիտներով եզերուած, ներքեւի բացուածքի շուրջը մարգարտի ժապաւէնով եզերուած: Թագի միւս զարդարանքները բուսական են թեթեւ մարգարտաչա-

digitised by A.R.A.R.@

րով․ Թագի ծայրերը խաչերով են վերջանում, կանաչ քարերով շինուած։ Լուսաւորչի դէմքը սպիտակաւուն, մորուքը գորշ, աչքերը վեր բարձրացրած։ Աջ ուսին յեցուած է գնդագլուխ, խաչազարդ գաւազանը, բունի վերայ երկու օղակներով։

Թեւաւոր հրեշտակը կանգնած է նորա առաջ եւ բացատրում է տեսիլքի նշանակութիւնը։ Ծալիկը երկար է մինչեւ ոտները, շալկի վերայից գօտի եւ ապա շուրջառ, եզրները ժապաւինած։ Հրեշտակն ունի փորուրար, զարդով եւ ժապաւինով վերջացած։

Լուսոյ խորանի միւս կողմը Տրդատն է, ծունկ չոքած եւ կռթնած գրակալի վերայ, խաչազարդ արքայական թագը գլխին, ճակատի կողմից բարձր զարդարանքով։ Թագի բացուածքի եզրները զարդարուն ժապաւինաձեւ շերտով, ինչպէս եւ միջին մասում երեք շերտով։ Ուսերին ձգել է փառաւոր ծիրանին ծիրանեգոյն, ուսերի կողմը սամոյրով, ինչպէս եւ քղանցքներն ու ներսի մասը (աստառը), արծաթի թելերով։ Գրակալը շալիկ ունի, վերան ծոպաւոր զարդ եւ թաչկինակ ձգած։ Թագաւորի դէմքն սպիտակաւուն, մորուքը կինեմոնագոյն։ Խաչագլուխ գայիռնը ընկած է ցած։

Տեսլեան այս պատկերագրութիւնը շրջանակուած է երկու իրար զուգահեռ ընթացող, լայն ժապաւէններով․ ներսինը՝ ոլորապտոյտների մէջ, փոխ առ փոխ, երկթեւեան հրեշտակների գլուխներ եւ խաչեր, ոլորապտոյտներն ու նրանց մէջ ընկած տարածութիւնները լցուած են բուսական եւ ծաղկաւոր զարդերով, իսկ արտաքինը ամենաճոխ կերպով միայն բուսական–ծաղկաւոր։ Ամբողջը առաջնակարգ արժէք ունեցող մի գործ, գոյների նուրբ փոփոխութիւններով, կտորների եւ հագուստների ազգագրական բարձր նշանակութեամբ, որոնց մասին մեր այս համառօտ եւ թեթեւ նկարագրութիւնը լուսանկարչական վերարտադրութեան հետ ամենադոյզն գաղափար անգամ տալ կարող չէ, մինչեւ գունազարդ եւ տեխնիկայի հետ կապուած խնդիրների բացատրութեամբ հրատարակութիւն չկատարուի։

Գործի մեծ արժէքը բարձրացնում է այն մեծ արձանագրութիւնը, որ մեզ տեղեկութիւն է տալիս ծագման ժամանակի, տեղի, նկարակերտող վարպետի եւ նուիրատուների մասին։ Ահա այդ արձանագրութիւնը, տողերի համեմատ թուանշաններով նշանուած։

1
Միտս․ *Ամբ*տՑ 1) յիշել աղաչեմ

2
Ըստ ընթացիցՑ հոլովմաՑ
ամաՑակաց 2) յափեթականՑ
ի ճառելդ *գըծ*ագրրականՑ
եղեալ զրաւըՑ յաՑգակՑ (?)
վարազուրըս զարմաՑականՑ
բազմածախ եւ յոգՑերաՑգեաՑ
ի յուսակիր զահուՑ պատկաՑ

3
Ի ՊոլիսըՑ ԿոստաՑդիեաՑ
արՓաեաՑ զահ օսմաՑեաՑ
ի ժամաՑակս սրբազՑէեաՑ
ԱղէՓսաՑդըր եռամեծեաՑ
մեզ կոչողիՑ եռա(*մաւծ?*)եաՑ 3)

1․ *Ստորագծուածները փակագրով․* Ամբ *կարդացուած գիրը կասկածելի*։ 2․ «ամանակաց» *բառի մէջ* Ց *տառը նկատելի չէ*։ 3․ *Ընթերցուածը կասկածելի*։

digitised by A.R.A.R.@

նշմարն իւղոյն ի նրագարան·
ի Կոստանդնուպոլիսեան
4
յաքոռն հրոյ երբեւեկեան
իսահակն աստուածաբան
նստեալ յաքոռ յաջորդական
մախթեմ յիշման առնել արժան
հանուր Հայքրն Բիւզանդիան
խումբ երիցանց նուիրական
5
եւ զայլս որ ի կարգին խորհան (?)
ներամփոփեալ վեցից մատրան
համանն (?) արժան առնել յիշման·
աստ սերմանելն ողորմութեան
անդ հնձեսցեն կեանս անվաղնան
դձլ մախթեմ տակաւին բան·
յիշել հանուր վանառական
6
ըզսառափունքրն միաբան
եւ հողագործքն արդարաբան·
ըզ հիւսիւնքն կեսարիեան
եւ զարդեկողքն արեւելեան
յիշել անմահ զառին զենման
ի լուսազգեց զահին իջման
յետոյ յետնեալ իմայն մարդկան
7
Աստուածատուրս ողբական
իբր վրդպտ անուամ բ միայն,
իսկ ըզգործովս տարագրական·
ընդ իս աշխատ ունողական
մանուլիւս ? (թէ մանկունիս)
հաւաքական
առ տէր առնել յիշման արժան
ի ժամ խնդրոյն տուայտական
8
Ի յարարչէն փառատրական
լիցի ձեզ մասն ողորմութեան :
եւ ը սմին խնդրեմ յիշել զնկարող պատկերացս տպագրապետ Գրիգորն· + եւ նկարակերտող սորին եւ այն ի Քս· յիշեցէք :

*Աղէքսանդր կաթողիկոսը Զուղայեցին է, Նահապետի յաջորդը եւ Աստուածատուրի նախորդը, որի հայրապետութեան տարիներն են 1706 – 1714: Կ. Պոլսի Իսահակ պատրիարքի ժամանակն է 1706 – 1707 եւ 1708 – 1714· իսկ տպագրապետ Գրիգորը Մարզուանցին է, որ Երեմիա Զէլէպի Քեոմիւրճեանի տպարանի տէրը դարձաւ 1707 թուին եւ շարունակեց մինչեւ 1734 թիւը *): Այս տուեալներու հիման վերայ, վարագուրի ծագման ժամանակը պիտի նշանակել 1705 – 1714 թուականներին, տեղը Կ. Պոլիս՝ նուիրաբերուած Ս. Էջմիածին տեղական սառափների, հացագործների, կեսարացի հիւսների եւ արեւելքից՝ այսինքն Նոր Զուղայից եւ Հայաստանից՝ եկող վաճառականների կողմից Աստուածատուր վարդապետի (եպիսկոպոս եւ նուիրակ հաւանօրէն) ձեռքով: Աղէքսանդր եւ Աստուածատուր կաթողիկոսների անունով Ս. Աթոռում ունինք եւ ուրիշ հնագիտական – գեղարուեստական մնացորդներ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ· ՅՈՎՍԷՓԵԱՆ

Պարիզ

*) Այս տեղեկութիւնը սիրալիր կերպով հաղորդեց Դոմտոր Թորգոմեանը, ազատելով մեզ ժամանակի մեր սուղ պայմաններում նշդել անհրաժեշտը Գրիգորի անձնաւորութեան նկատմամբ :

digitised by A.R.A.R.@